

ՃՇՏՈՒՄՆԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐՂՆԻ ԵՒ ՄԱՏԻՆ

Հայոց Արշակունեաց թագաւորութեան Մեծ Ծովի զաւառին մաս կազմած է Արղնին. սակայն անոր անունը յիշուած չէ մեր Ոսկեդարեան (Ե. դարու) մատենագիրներուն կողմէ: Այդ դարու պատմիչներէն փաւստոս Բիւզանդը Մեծ Ծովի մէջ յիշած է միայն այդ զաւառի բերդաւան Բնաքեղը եւ համանուն բերդը (այժմու Չնփուշին վայրը), ուր կը պահուէին Արշակունի հայ թագաւորներու արքունի դանձերը¹:

Սակայն Արղնին եւ անոր բերդը յիշած են միջնադարեան հայ մատենագիրներ՝ Մատթէոս Ուռհայեցի եւ Սմբատ Սպարապետը, որոնք մանրամասնօրէն նկարագրած են ԺԱ. դարու վերջին կիսուն Արղնի անառիկ բերդին վրայ գործուած յարձակումները յոյն նենդամիտ եւ ուխտագրութ կատապան Պեոտսի (1051) եւ Սելւոսկ վայրագ Սուլթան Տուղրիլի կողմէ (1062), ինչպէս նաեւ Արղնի իշխանութիւններուն աքսորը դէպի Պալքանեան երկիրներ եւ ժողովուրդին ալ կոտորածն ու գերեզմանութիւնը²:

Արղնին բախտաւոր եղած է նաեւ, որ Օսմանցիներու գրաւումէն ետք, թուրք կառավարութիւնը, ԺԲ. դարուն, շահագործել սկսած է Արղնիէն 3-4 ժամ կամ մօտաւորապէս 10 մղոն հեռաւորութեան վրայ գտնուած պղնձի հանքերը եւ, այդ առիթով, այնտեղ հաստատելով կեդրոնանիստ (մուքասարիֆլըգ) Մատեն գիւղաքաղաքը (կոչուած նաեւ Պաքըր Մատեն եւ Արղնի կամ Արգանա Մատեն, զատորոշուելու համար խարբերդի նահանգի Կիւմիշ Մատենէն, որ այդպէս կոչուած

էր իր արծաթի հանքերուն համար, որոնք ԺԲ. դարուն տակաւին շահագործման մէջ էին). օտար քարտիսագիրներ եւ պատմաբաններ Մատենի հետ յաճախ յիշած են Արղնին:

ԺԲ-Ի. դարերու հայ քարտիսագիրները, պատմաբաններն ու բանասէրներն ալ, մէկ կողմէն աչքի առաջ ունենալով միջնադարեան մատենագիրներէն՝ Ուռհայեցի եւ Սմբատի գրութիւնները Արղնի մասին, միւս կողմէն օրինակելով նորադարեան եւրոպացի եւ ամերիկացի քարտիսագիրներն ու պատմաբանները, յիշած են Արղնին իրենց քարտէսներուն եւ երկաւորութեան մէջ, ո՛չ նման Չնփուշին, որ Ժ. դարու վերջը (995-ին) երկրաչափներէն քանդուած հնադարեան Բնաքեղի աւերակներուն վրայ հազիւ ԺԱ. դարու վերջին քառորդին մօտերը (1065-70) կառուցուած էր Անիէն գաղթող խումբ մը կաշեգործներու կողմէ³ եւ չէր կրնար յիշուիլ Ուռհայեցի եւ Սմբատի կողմէ, որոնք նկարագրած են այդ դարու երրորդ քառորդի իրադարձութիւնները Չորրորդ Հայքի Մեծ Ծովի զաւառին: Իսկ Օսմանեան տիրապետութենէն ետքն ալ՝ ՔԵՔ-

1. Բաղմամէկ, 1963, թիւ 9-12, էջ 247-254 - Հ. Միքայէլ Յովհաննէսեանի «Ճշտումներ Ծովայն Աշխարհի Սահմաններուն» յօդուածը, եւ մեր Չնփուշապատումը (անտիպ):
2. Ուռհայեցի, էջ 129 եւ 156 եւ Սմբատ Սպարապետի Տարեգիրք, ՀԲԸՄ հրատ. Վենետիկ, էջ 49 եւ 52-59:
3. Բաղմամէկ, 1963, թիւ 9-12, էջ 255-259, մեր «Չնփուշն ու կաշեգործութիւնը» յօդուածը:

փակաւ հնարքներով, որոնց պատճառները հանդամանօրէն բացատրած ենք Չնփուշապատումին մէջ (անտիպ), Չնփուշը զուրս մնալով եւրոպական եւ ամերիկեան քարտէսներէն եւ Հայաստանի ու թուրքիոյ մասին գրուած օտարալեզու պատմագիրքերէն, անտեսուած է նաեւ զանոնք օրինակող հայ քարտիսագիրներէն եւ զիտնականներէն, որոնց վերջիններէն է նշանաւոր ակադեմիկոս-գիտնական Բարդէն Առաքելեան⁴, որ, Սովետական Հայաստանի միւս բոլոր քարտիսագիրներուն ու պատմագիտներուն պէս՝ Չնփուշը անտեսելով, անտեսած է նաեւ անոր խոշորագոյն արհեստը - կաշեգործութիւնը, խաղախորդութիւնը, որ ԺԱ-ԺԹ. դար՝ Տիգրանակերտի, խարբերդի եւ Ուրֆայի նահանգներու բոլոր քաղաքներուն ու գիւղերուն մէջ Չնփուշի առանձնաշնորհութիւնն է եղած եւ, ԺԹ. դարուն, Չնփուշն ընտանեօք գաղթողներու միջոցաւ Մալաթիոյ, Սեւերակի, խարբերդի եւ Տիգրանակերտի մէջ խաղախորդարաններ հաստատուած ըլլալով հանդերձ, Չնփուշը այդ արհեստին մէջ առաջնութիւնը եւ կաշիի մշակութեան մէջ գերազանցութիւնը չէր զիջեր փոքր Ասիոյ քաղաքներէն ո՛չ մէկուն: Փաստօրէն, Չնփուշն ու կաշին, դարերու ընթացքին, ա՛յն աստիճան իրա՛ւ հոմանիշներ էին դարձած խրարու եւ այս հասկացողութիւնն այնքան խոր ընդհանրացած էր վերոյիշեալ երեք նահանգներու գաւառներուն ու քաղաքներու - Ուրֆայի, Ատրեամանի, Սեւերակի, խարբերդի, Արաբկիրի, Մալաթիոյ, Շիրոյի, Կարեկառի, Տիգրանակերտի, Մատենի, Արղնիի, Ջերմուկի - ժողովուրդներուն մէջ, որ չնփուշ բառը հայ բառարաններու մէջ ալ մուտք գործած է արեւի կաշի նշանակութեամբ⁵: (Մեր նիւթէն զուրս է զրաղիլ այս հարցով, սակայն պէտք է աւելցնել, թէ արեւի (չարըս) կարծր կաշիի մշակութեան մինչեւ Ի. դար ալ մասնագիտութիւնը մնաց չնքուցիւններուն, որոնք մինչեւ հեռաւոր Արեւելքէն - Հնդկաստանէն, Չինաստանէն, եւլն. - կը ներածէին ամենաբիրտ հում

կաշիները եւ կը մշակէին Չնփուշի խաղախորդարաններուն մէջ):

Թող ներեն մեր ընթերցողները, որ Չնփուշի մասին վերեւի բացատրութիւնները տալ կարեւոր ըլլալով, պահ մը փոքր ինչ շեղեցանք մեր նիւթէն:

ԺԲ-Ի. դարերու Արղնիին ու Մատենին մասին գրող հայ նորադարեան եւ ժամանակակից բանասէր-պատմաբաններ մօտէն տեսած եւ անձամբ ճանչցած չըլլալով այս երկու քաղաքները եւ, անոնցմէ շատեր, յաճախ պղտոր աղբիւրներէ քաղելով իրենց տեղեկութիւնները, գործած են ակնյայտ սխալներ:

Այս յօդուածով մենք պիտի ծանրանանք միայն Հ. Ս. Էփրիկեանի Արղնիի մասին գրած իւրայ եւ մասնաւոր ծանօթագրութիւններով յոյց պիտի տանք, թէ ո՛րքան անճշտութիւններ եւ խառնաշփոթութիւններ կան այնտեղ:

Ահա Հ. Ս. Էփրիկեանի գրութիւնը. — «Արկնի, Արղնի, կամ Արղանա, գղ. Arghana, ինն ժամանակները նշանաւոր եւ ամուր բերդ Չորրորդ Հայոց Պաղին⁽¹⁾ գաւառի մէջ, իսկ այժմ գլխաւոր ֆաղաւան⁽²⁾ Տիգրանակերտի համանուն գաւառին⁽³⁾: Ըստ հնախուրդից բեւեռաբան-դակներու մէջ Արքանա կոչուած է ֆաղաֆս, եւ ըստ լատինաց Արսինիա (Arsinia): Կառուցուած է Բոլաղ լեռան կողմին վրայ գեղեցիկ դիրքով: Ծովու երեսէն բարձր է 2884 եւ կը մայի Տիգրանակերտի դաշտին վրայ: Զառիվայր դրից համեմատ բաժնուած է վերին, Միջին եւ Ստորին քաղերու կամ մասերու. բնակիչք են 6150, հետեւեալ կերպով բաժնուած⁽⁴⁾:

«Հայք (լուսաւորչականք՝ 2000 հողի(ա) բողոքականք՝ 525 (բ)
Թուրք 1625 (գ), քուրդ 1000 (դ)
Յայնք 1000 (ե): Գումար 6150⁽⁵⁾:
«Հասարակաց շինուածներն են 3 մզկիթ,

4. «Քաղաքներն ու Արհեստները Հայաստանում IX-XII դդ.»:

5. Ստ. Մալխասեանի «Հայերէն բացատրական բառարան» - Չնփուշ - մի հասարակ նիւթ, որից արեւն են շինուած:

10 մէանիտ, 1 եկեղեցի յունաց, 3 պանդոկ, 1 բաղնիք, 30 աղբիւր, 10 սրնարան, 60 կրպակ, 1 դեղավանդանոց⁽⁶⁾: Հայք ունին Ս. Սարգիս անուամբ կրկին եկեղեցիք, մին վերի քաղի եւ միւսն վարինի մէջ: Կրքական եւ ուսումնական վիճակն խեղճ է: Օգը առողջաբար է եւ ջուրը պատուականագոյն, որ կու գայ Ալի Տաղը կոչուած լեռնէն: Լեռան ստորոտէն, այսինքն հիւսիսային կողմէն կ'անցնի Տիգրիսի Պաղնայ-դէս ըսուած մէկ վտակը:

«Թէ՛ լեռան ստորոտը եւ քէ՛ քաղաքական գարդարուած են բագմաբեր այգիներով, արտերով ու պարտէզներով: Բերքերն են ցորեն, գարի, ամէն տեսակ բանջարեղէններ, միրգեր, մանաւանդ խաղող՝ յարմէ պատուական ընտիր գինի կը շինեն: Այս կողմերը բամբակ եւս կը մշակեն⁽⁷⁾: Ըստ Հ. Իննինեանի, այս գիւղաքաղաքս գրեթէ 300 տարի առաջ չկար, եւ բոլոր լեռը անտառ էր՝ լի առիւծներով եւ ուրիշ գազաններով, իսկ շրջակայ գիւղերը աւերելէն վերջ, բնակիչները այստեղ ժողովելով կառուցած են քաղաքս⁽⁸⁾: Կը յիշէ նաեւ աւերեալ գիւղերու եկեղեցիներէն Ս. Եղիաս, Ս. Մամաս, Ս. Լուս., Ս. Աստըւածածին, եւլն., որոնց ոմանք բոլորովին կործանած եւ ոմանք ալ կիսակործան դրից մէջ կը գտնուին: Արեւելի բնակիչք այս եկեղեցիներու տօնի օրեր ուխտի կը գնան, իւրաքանչիւր ոք իրեն նախնեաց գիւղի եկեղեցւոյն:

«Լեռան ծայրը կը գտնուի ահեղատեսիլ հին քերդն կամ *Ամուրն Արդնոյ*՝ ինչպէս կը կոչեն մեր մատենագիրներն: ԺԱ. դարու կիսուն... (*Այստեղ կը թուէ յոյն կատապան Պեռոսի դաւաճանութիւնը* (1051), յետոյ 1062 թուականին Սելճուկեան յարձակումը Արդնի բերդին վրայ եւ կը հասցնէ նկարագրութիւնը քաղաքական դէպքերուն մինչեւ Օսմանցիներու գրաւումը, եւ կը շարունակէ)⁽⁹⁾:

«Արեւի կամ Արդանա գաւառի տարածութիւնն կը համարուի 8530 ֆառ. հազարամեդր, բաժնուած է 3 գաւառակաց եւ 11 վիճակաց, ունի 1083 գիւղ: Բոլոր գաւառի բնակչաց ընդհանուր թիւն է 135.517,

յորոց 20.000ը հայք են, եւ մնացածը գաւառան ազգեր: Արդնիի գաւառն քէպէտ լեռնային մասեր ունի, բայց մեծաւ մասամբ դաշտային է: Կը մշակեն բամբակ, ցորեն, գարի, կտաւատ, բրինձ եւ այլ գաւառան ընդդէմներ, կը պահեն նաեւ անասուններ: Ընտիր են միրգերը, խաղողը շատ ազնիւ է՝ դեղին, սեւ, կարմիր եւ սպիտակ գոյներով, խոշոր հատիկներով, անուշահոտ ու մեղրածորան, գրեթէ լեռներն ամբողջ որքատունկ են: Ասկէ շատ հեռաւոր գաւառներ մեծ քանակութեամբ կը դրկուին չամիչ, պաստեղ, տեսակ տեսակ քաղցրաւենիք, կան նաեւ խեժ, գրգռ, սորուն, գագուլ, մորթեր աղուէսի, գայլու, կուզի եւլն: Տեղական արհեստները հայոց ձեռքն են, որոնք կը խօսին գուտ հայերէն:

«Կան շատ գիւղեր, որոնց մէջ քէնէն ալ ժամ Բուրտեր կը բնակին, բայց իրենց մէջ կան շէն կամ աւերակ հայկական եկեղեցիներ, այս գիւղերն են Համբարման, Հասուք, Ախտներ, Հալաք, Ս. Թորոս, Հիւար, Մալան, Թլիսըմար, Օհան-աղբիւր կամ Բակուր, Վարի գեղ, Հէրսընի, Կարմիր Քար, Ագրակ եւլն: Գաւառին լեռնային մասերը կը կազմեն Արդըրոյ-Մատեն, Ջերմուկ, Ակիլ, Կէօլմիւկ եւ Չմբուշ: Լեռներէն յիշենք Մեհրաք, Հագար Բաքա, Պան Տասուք, Աբտըլմսեհ՝ որուն վրայ ուխտատեղի կայ սրբայն անուամբ, եւլն: Համբեր ունեցող լեռներէն գլխաւորը կը կոչուի Բափուր-Մատեն, բարձր է 4222, միւս լեռներն են Արդընոյ լեռ 3753, Բալաղ-տաղ, Ալի Տաղ⁽¹⁰⁾: (*«Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան»*, էջ 308-311):

ՄԱՍՆԱՒՈՐ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎԵՐՆԵԻ ԳՐՈՒԹԱՆ

(1) Պաղին գաւառի այս սահմանաթաղանթը, այսինքն Արդնի անոր մէջ մասնէլը, սխալ է: Ճիշտ է, որ «Պաղին գաւառ» բացատրութիւնը գործածած են միջնադարեան մատենագիրներ Ռաւհայեցի եւ Սմբատ, սակայն անոնք անոր հետ համաստեղ չլինելու հետեւ Արդնի՝ որպէս գաւառ: Օրինակ. «Ի քվին ՇժԱ. (1062) գային գորագույնք

պարսից (*Սելճուկներու* – Գ. Գ.) ի Տուղրիլ Սուլդանէն, բագուլ գորօք, եւ հասին մինչեւ ի գաւառն Պաղնայ, Թլիսնոյ եւ յԱրեւի...» (Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Հ. Բ. Ը. Մ. Իրատ., Վենետիկ, էջ 57): ԺԲ. դարէն յետոյ ո՛չ միայն «Պաղին գաւառ» գոյութիւն չունէր, այլ կար միայն բրտարնակ դիւղ մը՝ Պաղին անունով, Արդնիի շրջակայքը: Միեւնոյն էր Թլիսնոյ:

(2) Սա՛ բացարձակ սխալ մըն է: Արդնի «այժմ» (1903ին, երբ հրատարակուած է Հ. Ս. Էփրեկեանի զեբը) եւ ոչ ալ ԺԲ-ի. դարերուն որեւէ ժամանակ, «գլխաւոր քաղաքաւան» եղած չէ «համանուն գաւառի» մը:

(3) Իսկ «համանուն» (այսինքն Արդնի անունով) գաւառ ալ գոյութիւն չունէր այդ դարերուն: Այստեղ հեղինակը Արդնի կը շփոթէ Մատենի հետ, որ, արդարեւ, ԺԲ. դարէն սկսեալ, կեդրոնանաւոր դիւղ մը, յետոյ գիւղաքաղաք մըն էր Տիարպէթիի կուսակալութեան մէջ, մնաքանքիֆլը, այսինքն թուրք կառավարութեան վարչական երկրորդ կեդրոնը՝ Տիարպէթի (կուսակալանիստ) քաղաքէն յետոյ: Ճիշտ է, որ, ինչպէս ըսինք վերեւ, Մատենը, ի միջի այլոց, կոչուած է նաեւ Արդնի Մատեն, սակայն Տիարպէթիի կուսակալութեան մէջ գտնուած քաղաքներու եւ գիւղերու բնակիչները զայն կը կոչէին լսկ Մատեն, եւ այդպէս ալ յիշած է Չմբուշի վանքին յիշատակարաններէն միոյն մէջ մեր վանահայր Առաջնորդ Գաապար արքեպս. (1756-1788). տակաւին ԺԲ. դարուն: Մատեն աւանակը կը ճանաչային զայն թուրք կառավարութիւնն ու ժողովուրդը եւ այդպէս ալ գրուած է թուրք քարտէսներու եւ պատմագրքերու մէջ:

(4) «Ըստ հնախոյզի...» էն մինչեւ այստեղ Մատենին չվերաբերիր, այլ Արդնիին: Սխալ են (ա) «Տիգրանակերտի դաշտին վրայ» եւ (բ) բնակիչներու թիւը: (ա) Արդնի կը նայի Արդնիի դաշտին վրայ, որ շատ աւելի ընդարձակ եւ բարեբեր է քան «Տիգրանակերտի դաշտը», որուն կը միանայ Տիգրանակերտի մերձակայքը: Այս դաշտը բուրբուրուն կողմէ կը կոչուի Կավուան: (գ) Արդնի եւ Մատենի բնակչութեան միացեալ թիւը հազիւ 6.500 էր:

(5) Կատարեալ Պոշոյոճ մըն է «հայք» էն մինչեւ այստեղ: Թիւերու բարեկոն մը: Փորձենք սրբագրել մեր նշանակած այբբենական կարգով: (ա) Այս թիւը Մատենի եւ Արդնիի բովանդակ հայ բնակչութեան համար կարելի է մօտաւորապէս ճիշտ համարել: (բ) Ո՛չ Արդնիի եւ ո՛չ ալ Մատենի մէջ «525 բողոքական» ներկայ էին: Երկու աւաններուն մէջ ալ հայ բողոքականներուն թիւը 20-30 տունէն աւելի չէին: Այս մասին կը վկայեն նոյն իսկ միաբնակներու Խարբըղէն Պոսթոնի Պոշոյոճի զեբած նամակներն ու տարեկան տեղեկագիրները, որոնք կը պահուին Հարվըրտ համալսարանի Houghton

Library-ի մէջ: (գ) Այս թիւը Արդնիի թուրքերուն թիւին կը համապատասխանէր, Մատենի մէջ այդքան թուրք չկար: (դ) Իսկ այս թիւն ալ Մատենի մարդը մահմետական բնակչութեան թիւին կը համաստեղ, Արդնիի մէջ թուրք չկար: (ե) Արդնիի մէջ չկային նաեւ յոյն եւ հրեայ. փակ Մատենի յոյն եւ հրեայ բնակչութեան միացեալ թիւը ասկէ ալ պակաս էր: Ի՞նչ էր իրականութիւնը Մատենի եւ Արդնիի բնակչութեան մասին ԺԲ. դարու վերջին քառորդին եւ Ի. դարու սկզբին, ըստ ազգութեան: Համաձայն մարդահամարի մը, որ Հ. Ս. Էփրեկեան եւս հրատարակած է իր Բնաշխարհիկ Բառարանին մէջ, արտասպէլով Արեւելքէն, 1891-ին Մատենի մէջ կը բնակէին՝ Հայք՝ 1.000, քուրդք՝ 405 = 3155 (Արեւելք, Կ. Պոլիս, Թ. 1193): Իսկ համաձայն նոյն օրաթերթին Մարտ 1/14, 1900, ք. 4261ին՝ Արդնիի հայ եւ թուրք համախառն տուններու հանրագումարն էր՝ 600, եւ Մատենի բոլոր ազգութեանց միացեալ տուններու ընդհանուր թիւն էր՝ 1.000, որուն 150ը՝ Հայոց անէր: Գարեգին Վ. Սրուանճեան, որ 1879ին կարճ այցելութիւն մը տուած է երկու գիւղաքաղաքներուն ալ, Մատենի հայ տուններու թիւը գրած է՝ 163, իսկ Արդնիին՝ 252 (Թորոս Աղաք, Բ. էջ 180-181): Մեր արամադրութեան ներքեւ ունենք ընդարձակ մէկ գրութիւնը 1907ին Մատենի մէջ պաշտօնավարող Պատ. Յովհ. Ն. Աշոտեանի, որ Մատենի բովանդակ հայ բնակչութեան տուններու թիւը գրած է՝ 200-250, իսկ բողոքականներունը՝ 20-25: Տրուած ըլլալով, որ Մատեն, իր համբին եւ մուքասաբիֆուրեան շնորհիւ, օրէ օր կ'աճէր՝ ի հեճուկս Արդնիի եւ Բալուէի, ուրկէ կը գաղթէին հոն ընտանեօք, վերջիններու բնակչութեանց թիւն ալ կը նուազէր:

(6) «Հասարակաց...» էն մինչեւ այստեղ Մատենին կը վերաբերի եւ մօտաւորապէս ճիշտ է: Մոռցուած է հայոց եկեղեցին եւ չափազանցուած ազդեցիկներու թիւը: Արդնիի ջրառատ տեղ էր եւ ունէր գիւղաքաղաքին մէջ ու շրջակայքը այդ թուով հասուն աղբիւրներ:

(7) «Հայք ունին...» էն մինչեւ հոս («Կը մշակեն») Արդնիին կը վերաբերի եւ գունազդեղ նկարա-

6. Սմբատ՝ «Պարսիկ», իսկ Ռաւհայեցի՝ «տաճիկ» կոչած են Սելճուկները:

7. Կավուան քրտերէն կը նշանակէ ՀԱՅՔ: Քուրդերը հայերը կը կոչեն ԿԱՎՈՒՌ – Կավուր – կավուան: Անհատական չէ, որ հին դարերուն այս դաշտը կոչուած ըլլայ իր տէրերու (ՀԱՅ) անունով՝ ՀԱՅՔ:

8. «Պոշոյոճ» անունն է շնորհգրական կերակուրի մը, որ կ'եփուի միտով, պղտուով, կորկոտով եւ ամէն տեսակ բանջարեղէններով:

գրութիւնն ալ շատ տեղին: Արդեն իրապէս համեմատելով իրարմանքը եւ դառն ալ արդարաւոր էր:

(8) «Ըստ Հ. Ինգիսմանի...» էն մինչեւ «Բագմավիկայ» Մատենի մասին է, եւ ճշմարիտ է: Մեր երկասիրած Ձեռնարկագրութիւնն մէջ (անտիպ) Ձեռնարկ եւ Արդենի վանքերուն մէջ 1879ին Գարեգին Վրդ. Սրբանձաւեանի օրինակած եւ 1884ին «Թորոս Աղբար, Բ.»-ով հրատարակուած յիշատակարաններու, ինչպէս նաեւ Մինաս Ամբեցու 1684-85 տարիներուն նոյն վանքերուն մէջ գրած Օրագրութեան տուեալներով փաստած ենք Մատենի գրքերէ 300 տարի առաջ չկար՝ իրողութիւնը: Աւելին: Հ. Ղ. Ինգիսման 1808ին վանքերի տպուած իր «Աշխարհագրութիւն Չորից մասանց Աշխարհին» մէջ (Ա. հոր. Ասիա, էջ 243), կը գրէ Մատենի մասին. «Գիւղ» 3 ժամուս հեռի Արդենի գիւղաքաղաքէն, ընդ մէջ նոցա անցանք ջուր, յորոյ ի մի կողմն բնակին հայք, եւ ի միւս կողմն՝ յոյնք, երկուքն եւս ունեւոր մի մի եկեղեցի, եւ եւս առ հասարակ գործավարք համքի, ժողովեալ գոյով աստի եւ անտի, եւ անդ տաճիկ մուգ քան երկու ազգանք: Արժանահատ պատմաբան այս գրութիւնը եւս — Մատենը «գիւղ» կոչելով — կը հաստատէ, թէ ան «գրքերէ 300 տարի առաջ չկար», թէ Ժ. Դարուն կառուցուած էր այն, եւ թէ անոր շինութեան եւ զարգացման ազդակն էր պղնձի հանքը, որ Արդենի շրջակայքէն դէպի իրեն քաշած էր — «ժողովեալ գոյով աստի եւ անտի» — հայերն ու յոյները, որոնք կը հարստահարուէին ենիշէրինքէն ու քուրտերէն: Մատենը, ուրեմն, մասամբ հանդիսացած է նաեւ ազգապահպանման ազդակ՝ այնտեղ դիմող հայերուն եւ յոյներուն, որոնց դիւղերը այդ դարաշրջանին — Ժ. եւ Ժ. Դարերուն — անտանելի բռնութեանց չզիջանալով՝ քրտացած էին կամ քանդուած: Տակաւին Ժ. դարու վերջը Արդենի շրջակայքը առկայ էին հայաբնակ դիւղեր, ինչպէս Թքիւնակ, որ քահանայ ալ ունէր՝ 1684ին, եւ 1685ին Թքիւնակցի հայեր այցելած են Մինաս Ամբեցիին՝ Արդենի վանքը (Օրագրութիւն, փետր. 20, 1684 եւ Սեպտ. 17, 1685 — տե՛ս Ձեռնարկագրութիւն): Մեր օրերուն, Ժ. եւ ի. դար, Թքիւնակի անունն անգամ մոռցուած էր...: Թքիւնակէն եւ այլ հայադիւղերէն եւ յունարենակ դիւղերէն Մատենը դադարող յոյներուն եւ հայերուն, Ժ. Դարուն նորակերտ Մատենի կառավարութիւնը իր շահագործած պղնձի հանքերու այս գործավարքներուն» գիւղութիւններ ալ տուած է (եկեղեցի շինելու արտօնութիւն, եւլն.) ազգապահպանման համար:

(9) «Կը յիշէ...» էն մինչեւ անոր յաջորդող երկար պարբերութեան վախճանը («Կը շարունակէ») կամ «Արկնի կամ Արգանա գաւառ» բաւերով սկըսող նոր պարբերութիւնը, որ Ժ. Դարու երկրորդ կեսին Արդենի բերդին շուրջ կատարուած տխուր

իրադարձութեանց եւ մինչեւ Օսմանցիներու դրաւուրը քաղաքական դէպքերու համառոտագրութիւնն է, մենք տեղ խնայելու համար չարտադրենք անգամ, որովհետեւ մեր նիւթին՝ Արդենի եւ Մատենի ժամանակակից պատմութեան նշանակութիւնը հետ առնչութիւն չունի: Կրկնենք, սակայն, թէ այդ պատմական դէպքերը կը վերաբերին հրապարեան Արդենին եւ ոչ թէ Մատենին, որ «գրքերէ 300 տարի առաջ չկար»:

(10) «Արկնի կամ Արգանա գաւառ» սահմանում, Ժ. Ժ. Դարերու ժամանակամիջոցին համար, սխալ ըլլալը վերեւ նշեցինք: Այդ սահմանումով Հ. Ս. Էփրեկեանի նկարագրած «գաւառ»ը, եթէ այդպէս կարելի է կոչել անոր ներկայացուցած այդ ընդարձակ տարածութիւնը՝ որ կ'ընդգրկէ հնադարեան Արդենի, Թլխմոյ, Պաղինի եւ Ծովքի գաւառները, կը կոչուէր Մատենի մութասարիփութիւն եւ մինչեւ 1884 թուականը՝ Մատեն կեդրոնանիստ գիւղաքաղաքին միջոցաւ՝ մաս կը կազմէր Խարբերդի կուսակալութեան: Այդ չորս բաղնիքն («Արկնի կամ Արգանա գաւառ») մինչեւ դրութեան վերջը («Ալի տաղ»), կը պատկանէր Մատենի մութասարիփութեան, եւ ոչ թէ կը կազմէ որեւէ գաւառ, որուն «8530 ֆառ. հազարամեկ տարածութեան» մէջ կը գտնուէին Մատենէն արեւելք՝ մինչեւ Ջերմուկը, արեւմուտք՝ մինչեւ Կեօյնիկը (Ծովք) եւ հարաւէն՝ մինչեւ Ձեռնարկը: Անոր մէջ յիշուած լեռներէն ոմանք (ինչպէս հազար Բաքա, Արդլմսեհ, եւլն) Խարբերդի եւ Ձեռնարկի աւելի մօտ էին քան Արդենի կամ Մատենի, որոնցմէ հազարաւոր քիլոմետրով հեռու էին, իսկ յիշուած աւելի կամ քրտարենակ դիւղերէն շատերը (համարաւոր — հապուման, հասուք — հացումի, եւլն.) Ձեռնարկի շրջակայքի եւ Օրագրութեան ու յիշատակարաններու մէջ բազմիցս յիշուած դիւղերն են:

Իր «Բնաշխարհիկ բառարան»ին մէջ, յիշեալ Արդենի կամ Արգանայի վերաբերող վերեւի գրութեանն անմիջապէս հաջորդող վերեւի գրութեանն անմիջապէս հաջորդող է Արեւելի հետեւեալ գրութիւնը «Արգանա կամ Արդնոյ Մատեն» խորագրով —

«Աւան Արկնի գաւառի մէջ, նշանաւոր է համբերովն, ի քուրբաց կողմէ կը կոչուի նաեւ Պաքըր Մատեն, (ա) Արկնիէն հեռու է 18 հազարամեկը հիւս. արեւմուտեան կողմը: Դիւղը լեռնային է եւ տուները լեռնա գագաթէն մինչեւ ստորոտը կը տարածուին, այսինքն մինչեւ ձորը, ուրկէ կ'անցնի ջուր մը: Գիւղիս բնակիչք ընդհանրապէս կ'աշխատին համբերու վրայ, որոց քիւն երբեմն կը բազմանայ եւ

երբեմն կը նուազի: Միջին հաշուով այժմ ունի 3155 բնակիչ հետեւեալ կերպով բաժնուած:

Հայք՝ 1.000, քուրդք (և թուրք)՝ 1.000, յոյնք՝ 750, հրեայք՝ 405 = 3.155:

Հայք ունին եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին եւ մէկ վարժարան: Յոյնք եւս ունին եկեղեցի մը, իսկ մահմետականք՝ երեք մզկիթ: Իւրաքանչիւր ազգաց քաղերն գաւառն են, կան նաեւ արտեր եւ պարտէզներ: Օղն աղէկ չէ, ամառը սաստիկ տաք կ'ընէ, ջուրն ալ լաւ չէ, բայց Տիգրիս գետի ջուրը կը գործածեն, որ գիւղին արեւելեան կողմէն կ'անցնի, ուր 10 կամ 15 կանգուն լայնութիւն ունի եւ ձուկեր ալ կը պարուակէ: Թէ՛ գիւղիս եւ թէ շրջակայ լեռներու մէջ՝ առատ պղնձի հանք ըլլալով, լեռներուն վրայ շատ տեղ այրեր ու գուրբի փորած են, մանաւանդ Մազարա լեռն վրայ: Գիւղին (բ) ամէն քաղերուն մէջ խոշոր խոշոր պղնձախան հանքային քարեր ձգուած են, յորոց շատեր գործածուած են նաեւ որմերու շինութեան մէջ: Տեղւոյս համբը շատ հարուստ է, տարին 2.500.000 հոլիս պղնձ կ'ելնէ: Այս բոլոր հանքառատ լեռները՝ որ երբեմն երկնաքեր ծառերով անտառացեալ էին, այսօր չոր ու լեռն ապառաժութեամբ են, վասնզի դարերէ ի վեր հանքահանքը հանած պղնձն գտելու համար՝ հալեցնելու կրակի տեղ գանձն անխնայ կը տրորած ու վառած են, առանց անոնց տեղնոր ծառեր տնկելու: Արդնի Մատեն գա-

ւառակի ընդհանուր բնակչաց քիւն է 48.500, յորոց միայն 7.000ը հայք են: (գ) «Ճնայր. ի Բաքելուն, 48, Վ. Բիւնէ, Բ. 480-485ր Արեւելի, Բ. 1193»:

Արեւելի այս գրութիւնը ճշգրիտ նկարագրութիւնն է Մատենի գիւղաքաղաքին, իր բոլոր երեսներով: Կը տեսնենք, թէ այն կը հաստատէ «ի քուրբաց Պաքըր Մատեն» կոչուելը, (ա) եւ քանիցս զայն «գիւղ» ալ կը կոչէ, (բ) իսկ վերջամասին մէջ «Արկնի գաւառ»ին կու տայ «Արդնի Մատեն գաւառակ» անունը եւ անոր բընակչութեան թիւը կ'իջեցնէ «48.500, յորոց 7.000ը հայք են»: (գ) Այլ խօսքով «Արդնի» կամ «Պաքըր Մատեն» գաւառը կամ գաւառակը միայն մէկ մասն էր Մատենի Մութասարիփութեան, եւ կ'երկարէր Մատենէն մինչեւ Ջերմուկ միայն:

Ջարմանալի է, Հ. Ս. Էփրեկեան, Արեւելի վերեւի արտապոսումն ընելէ ետքը, ինչպէս չէ անդրադարձած «Արկնի, Արդնի կամ Արգանա» գիւղաքաղաքի մասին իր գրութեան խառնաշփոթութեանը եւ անհեթեթութեանը:

Հաւատարիմ մնալով մեր նիւթին, այս յօդուածով մենք Արդնի եւ Մատենի մասին ճշտումներ կատարելով կը բաւականանանք: Մեր աշխատասիրած Ձեռնարկագրութիւնն մէջ թէ՛ Արդնի, թէ՛ Մատենի եւ թէ՛ Ջերմուկի մասին տրուած են յաւելեալ տեղեկութիւններ:

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ